քերը։ Ինչպէս ամբողջ Եւրոպայում միաժամանակ տարածուեցին մեքենաները, շոգեշարժերը, ելեկտրականութիւնը եւ գիտութեան արտադրութիւններից հաւասարապէս օգտուեցին ամբողջ Եւրոպան եւ Ամերիկան, սրանց հետ զուգրնթացաբար աշխարհի միւս մասերը. այդպէս էլ պղնձի, երկաթի, մետաղների եւ կրի գործածութիւնը կատարուել է Միջագետքի ամէն մի ծայրում, մինչեւ գետերի ակունքը միեւնոյն դարում։ Նոյն իսկ Նայիրի երկրի հիւսիսային ծայրի Ճորոխի գետի ՝համանունը Էլամի ամենահարաւային գետի վրայ՝ Ճերրոխը ստիպում է մտածելու, թէ անշուշտ սրանք իրարից են փոխ առած։ Եթէ երկաթը 750 տարի առաջ Նայիրի երկրի ապառաժների քանդակագործութեան համար գործածուել է, չէր կարող նոյն դարում չգործածուել այդ մետաղը Միտանայում, Հաթթերի երկրում–Կիլիկիայում, Էլամում եւ ստորին Միջագետքում։ Տարակոյս չկայ, որ կիրը նախ գործածուել է Նայիրի երկրում, որպէս տեղական նիւթ եւ ապա տարածուել է դէպի հարաւ։ Նայիրի երկրում կիրը գրեթէ չնչին արժէք էր կազմում. իսկ Սանաար դաշտում նա շռայլութիւն էր, քանի որ հեռաւոր երկրներից պիտի բերէին կրաքարը լաստերով եւ տիկերով։ Այս բոլորից կարելի է հետեւցնել որ Ակկադ–Սումեր աշխարհի մոքի եւ ձեռքերի արտադրու-